Ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների գործունեությունը 1991-1992 թթ.

Զաքարյան Լ.Ս.
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ., դոցենտ (Երևան, Հայաստան)
lilit_zakaryan@mail.ru

Վճռորոշ բառեր՝ ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդներ, տեղական ինքնակառավարման մարմիններ

Вопросы местного самоуправления в первые годы независимости Республики Армения. Деятельность местных советов народных депутатов в 1991-1992 годах

Закарян Л.С.
старший научный сотрудник Института истории НАН РА, к.и.н, доцент (Ереван, Армения)
lilit_zakaryan@mail.ru

Резюме: В статье представлена проблема управления на местах в 1991-1992гг. После провозглашения независимости в Армении начался процесс реконструкции центральных органов власти, однако на местах сохранились местные советы народных депутатов. Местные советы, оказавшись в новых условиях работы, не всегда справлялись с новыми проблемами. В республиканских органах правления к власти пришли новые силы, Коммунистическая партия полностью потеряла свое влияние, между тем в большинстве местных советов представители старой номенклатуры остались на уровнях принятия решений. Это создавало недоверие и недовольство у представителей центральной власти. Был поставлен вопрос ликвидации местных советов и создания органов местного самоуправления, но проблему стало возможно решить только после завершения военных действий и принятия Конституции РА в 1995 году.
Ключевые слова: местные советы народных депутатов, местноесамоуправление

Issues of local government in the first years of independence of the Republic of Armenia. The activities of local councils of people's deputies in 1991-1992

Zakaryan L.S.
Senior Researcher, Institute of History of NAS RA
PhD in History, Associated Professor (Yerevan, Armenia)
lilit_zakaryan@mail.ru

Abstract: The article presents the problem of local governance in 1991-1992.After independence, the process of reconstruction of the central authorities began in Armenia, however, local councils of people's deputies were locally preserved.The local councils, finding themselves in new working conditions, did not always cope with the problems that fell upon them.New forces came to power in the republican government bodies, the Communist Party completely lost its influence, meanwhile, in most local councils, representatives of the old nomenclature remained at decision-making levels.This created distrust and discontent among representatives of the central government.The question of eliminating local councils and creating local self-government bodies was raised, but the problem became possible to solve only after the end of hostilities and the adoption of the Constitution of the Republic of Armenia in 1995.
Keywords: councils of people's deputies, self-government

ԽՍՀՄ-ի վերջին տարիներին՝ ժողովրդավարացման գործընթացների և Կոմունիստական կուսակցության անվերապահ իշխանության թուլացման պայմաններում սկսեցին քննարկումներ գոյություն ունեցող ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների համակարգը Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի[1] դրույթներին հարմարեցնելու ուղղությամբ:

[1]Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիան մշակվել է Եվրոպայում իշխանության տեղական և տարածաշրջանային մարմինների մշտական կոնֆերանսի (ներկայիս՝ Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի) նախաձեռնությամբ 1985 թվականին:

1990-1991 թթ. ԽՍՀՄ-ում այդ հարցի շուրջ ձևավորվել էին հետևյալ մոտեցումները՝

- Պահպանել կառավարման տեղական խորհուրդների համակարգը
- Ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդները վերանվանել տեղական ինքնակառավարման մարմիններ, բայց պահպանել նրանց տեղն ու դերը պետական կառավարման համակարգում,
- Ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդներն ընդհանրապես առանձնացնել պետական կառավարումից, դարձնելով իրապես անկախ ինքնակառավարվող մարմիններ:

Վերջին տարբերակի դեպքում նախատեսվում էր, որ դրանք պետք է ինքնուրույն ձևավորեն տեղական բյուջեները, բայց որոշ լիազորություններ կառավարությունը կարող էր փոխանցել տեղական մարմիններին և դրա համար ապահովեր համապատասխան ֆինանսավորում: Տեղական կառավարման մարմինների իրական ինքնավարության հաստատման դեպքում խորհրդային մի շարք օրենքներում պետք է փոփոխություններ կատարվեին: Խորհրդային օրենսդրությամբ վերադաս մարմինը իրավունք ուներ չեղյալ հայտարարել տեղական խորհրդի որոշումը, ինքնակառավարման դեպքում՝ այն զրկվում էր այդ իրավունքից՝ խախտում նկատելու դեպքում միայն կարող էր նախազգուշացներ տեղական մարմնին, իսկ հաշվի չառնելու դեպքում հարցը կարող էր լսվել դատարանում: Եթե վերջին տարբերակը ընդունվեր, պետական սեփականության կողքին հայտնվելու էր սեփականության նոր ձև՝ մունիցիպալ սեփականությունը: Քննարկվում էր նաև ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների ընտրությունների մոդելի հարցը՝ ուղղակի, անուղղակի և այլն: Այս քննարկումները ավարտվեցին 1990 թ. ապրիլի 9-ին «ԽՍՀՄ տեղական ինքնակառավարման և տեղական տնտեսության ընդհանուր սկզբունքների մասին» օրենքի ընդունմամբ, որը սակայն մեծ փոփոխություններ տեղական կառավարման համակարգում չառաջացրեց: Տեղական կառավարման վերաբերյալ փոփոխություններ եղան 1990 թ. ԽՍՀՄ նոր սահմանադրության նախագծում:

Հայաստանում Արցախյան շարժումը հասարակական գիտակցության մեջ հեղաբեկում էր առաջացրել, հանրապետությունը այլ գլոբալ խնդիրներով էր տարված: Հայաստանը չընդունեց ԽՍՀՄ նոր Սահմանադրությունը և տեղական խորհուրդների կարգավիճակում մեծ փոփոխություններ չեղան: Բացի այդ Հայաստանի Հանրապետությունը 1990 թ. օգոստոսից բռնել էր անկախացման ուղին, կանգնած էր փոխակերպման շեմին և տեղական կառավարման հարցը ամենևին էլ առաջնահերթություն չէր համարվում: Արդեն պարզէր, որ հասարակությունը լուրջ սոցիալ-տնտեսական խնդիրներ է ունենալու: Արմատական բարեփոխումների համար բարենպաստ չէին արտաքին պայմանները, գնալով ավելի ու ավելի էին լարվում հարաբերությունները հայ –ադրբեջանական սահմանին:

1991 թ. ռեգիոնալ պլանավորման տեսանկյունից Հայաստանը բաժանված էր 7 գոտու՝ Զանգեզուրի, Վայքի, Սևանի, Ուտիքի, Լոռի-Փամբակի, Շիրակի, Արարատի [1]: Կառավարումը տեղերում տեղի էր ունենում ժողովրդական պատգամավորների շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, գյուղական, ավանային խորհուրդների միջոցով: Խորհուրդները կառավարման միասնական համակարգի մաս էին կազմում և տեղերում իրագործում էին ՀՀ Գերագույն Խորհրդի, կառավարության, տարբեր նախարարությունների օրենսդրական ակտերը, սակայն ստեղծված լինելով այլ երկրի պայմաններում, այլ կառավարման համակարգի համար, դժվարությամբ էին հարմարվում նոր խաղի կանոններին: Բնակչության իրավագիտակցությունը դեռևս պատրաստ չէր տեղական ինքնակառավարման սկզբունքների իրագործմանը: Տեղական խորհուրդները օրեցօր թուլացող խորհրդային երկրի տրամաբանությամբ էին աշխատում: Նոր իշխանությունների ջանքերը այդ ուղղությամբ վճռական չէին, չկար նաև տեղական իքնակառավարման համակարգի ձևավորման նոր հայեցակարգ: Այդ պատճառով տեղական կառավարման ոլորտում արված քայլերը կոսմետիկ բնույթ ունեին:

1991 թ. ապրիլի 15-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (հիմնական օրենքի) մեջ և Հայաստանի Հանրապետության մյուս օրենսդրական ակ-

տերում փոփոխություններ կատարելու մասին» օրենքով [**2**] որոշվեց ՀՀ «Ժողովրդական պատգամավորների տեղական՝ շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, ավանային և գյուղական խորհրդի ժողովրդական պատգամավոր» բառերը փոխարինել «տեղական՝ շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, ավանային և գյուղական խորհրդի պատգամավոր» բառերով: Այս որոշման տրամաբանությամբ քայլ էր արվում համաժողովրդական խորհուրդներից տեղական ինքնակառավարման անցնելու ուղղությամբ, ընդգծվում էր, որ տեղական խորհուրդը սպասարկում է համայնքի կարիքները և ոչ թե ամբողջ երկրի: Բնականաբար բառերի փոփոխությունից դրանց դերակատարման մեջ տեղաշարժեր չառաջացան:

Պատահական չէ, որ 1992 թ. երկրի նախագահը՝ Լևոն Տեր-Պետրոսյանը նշում էր. «Տեղական իշխանություններն այսօր համարյա դուրս են մեր պետական կառուցվածքից: Եվ եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ տեղական իշխանությունները մեծ մասամբ ներկայացված են նախկին համակարգի պաշտոնյաներով, ապա պարզ պետք է լինի, թե ինչպիսի հակասություններ են առաջացել կենտրոնական ու տեղական իշխանությունների միջև: Եթե խորհրդարանը կարողանար կարճ ժամանակի ընթացքում լրացնել այս բացը, որոշակի իրավական դաշտ ստեղծեր տեղական ինքնակառավարման համակարգի համար, այսինքն վերջապես ընդուներ տեղական ինքնակառավարման մասին օրենքը, ապա մենք շատ լուրջ քայլ արած կլինեինք մեր պետական կառույցների կատարելագործման հարցում» [**3**]:

Հակասությունների մի մասը, որոնց մասին խոսում էր երկրի նախագահը, օրենսդրական հիմքեր ունեին, քանի որ հստակ տարանջատված չէին պատգամավորների տեղական խորհուրդների և կենտրոնական իշխանության մարմինների լիազորությունները: Տեղական խորհուրդների գործադիր մարմինները ունեին երկակի ենթակայության բաժիններ և վարչություններ, որոնք հաճախ ավելի կարևորում էին տեղական որոշումները:

1991 թ. սկզբին փորձ արվեց կանոնակարգել տեղական խորհուրդների գործունեությունը: ՀՀ ԳԽ նախագահության «ՀՀ ժողովրդական պատգամավորների շրջանային, քաղաքային և քաղաքային շրջանային խորհուրդների առաջին նստաշրջանների մասին» 1991 թ. հունվարի 5-ի որոշմամբ [**4**] պետք է նստաշրջաններ գումարվեին այն բոլոր տեղական խորհուրդներում, որտեղ համապատասխան տարածքային հանձնաժողովը գրանցել է «խորհրդի պատգամավորների ընդհանուր թվակազմի երկու երրորդից ոչ պակաս պատգամավորների, իսկ առաջին նստաշրջանների աշխատանքները սկսվում են, եթե նիստերին մասնակցում են պատգամավորների ընդհանուր թվակազմի կեսից ավելին»: Որոշման համաձայն այդ խորհուրդների նախագահության անդամ հանդիսացող մշտական հանձնաժողովների նախագահները իրենց պարտականությունները պետք է կատարեին հասարակական կարգով:

ՀՀ ԳԽ նախագահության «ՀՀ ժողովրդական պատգամավորների շրջանային, քաղաքային (հանրապետական ենթակայության), քաղաքի շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների բաժինների և վարչությունների ղեկավարների հաստատման մասին» [**4**] որոշմամբ խորհուրդների գործադիր կոմիտեների երկակի ենթակայության բաժինների և վարչությունների ղեկավարների թեկնածությունները պետք է ներկայացվեին խորհրդի հաստատմանը համապատասխան գերատեսչությունների համաձայնությամբ: Այս որոշմամբ փորձ արվեց հսկողության տակ առնել խորհուրդների կադրային քաղաքականությունը, ուժեղացնել վերահսկողությունը դրանց նկատմամբ: Նպատակահարմար համարվեց գործկոմների ներքին գործերի վարչությունների և բաժինների պետերի նշանակումը կատարել ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից, շրջանային գյուղատնտեսական վարչությունների պետերի նշանակումը կատարել ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից՝ համապատասխան խորհուրդների համաձայնությամբ:

Քիչ անց ընդունվեց նաև ՀՀ նախարարների խորհրդի կադրերի նշանակման բնագավառում ՀՀ պետական կառավարման մարմինների, և պատգամավորների տեղական խորհուրդների գործադիր կոմիտեների լիազորությունների սահմանազատման մասին որոշումը [**5**]: Որոշման համաձայն ՀՀ շրջանային,

քաղաքային խորհուրդների նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում մինչև հերթական նստաշրջանում հաստատումը գործադիր կոմիտեներն իրենց երկակի ենթակայության բաժինների և վարչությունների (տնտեսագիտական ծառայություն, ֆինանսների բաժին, աշխատանքի և սոցիալական ապահովության, առողջապահության, մշակույթի, կրթության, բնակարանային-կոմունալ տնտեսության, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի և կապի, առևտրի և հասարակական սննդի, կենցաղային սպասարկման, վիճակագրության, ճարտարապետության բաժիններ և վարչություններ, այլ ծառայություններ՝ նշված ստորաբաժանումները պատգամավորների տեղական խորհուրդների գործկոմների կազմակերպական կառուցվածքում լինելու դեպքում) ղեկավարներին պետք է նշանակեին կամ ազատեին իրենց պարտականությունների կատարումից համաձայնեցնելով ՀՀ համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների հետ: Մնացած ստորաբաժանումների ղեկավարներին և այլ աշխատողներին պատգամավորների շրջանային, քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեներն էին նշանակում:

Սահմանվեց նաև տեղական խորհուրդների տարածքում տեղաբաշխված պետական ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների ղեկավարներին, ղեկավար աշխատողներին պաշտոններում նշանակման և ազատման կարգը: Շրջանի, քաղաքի տարածքում տեղաբաշխված ընդհանուր հանրապետական նշանակության առևտրի և հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման, բնակարանային-կոմունալ տնտեսության, լուսավորության, առողջապահության, մշակույթի, սոցիալական ապահովության կազմակերպությունների, հիմնարկությունների և ձեռնարկությունների ղեկավարները պետք է նշանակվեին և ազատվեին աշխատանքից պետական կառավարման համապատասխան մարմինների կողմից: Արտադրական ոլորտի, լուսավորության, բնակարանային-կոմունալ տնտեսության, առողջապահության, մշակույթի, շրջանային, քաղաքային ենթակայության ձեռնարկությունների, կազմակերպությունների ու հիմնարկությունների ղեկավարներին և մյուս ղեկավար աշխատողներին նշանակելու էր պատգամավորների շրջանային, քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեն: Դրա հետ մեկտեղ առևտրի և հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման, քաղաքային, շրջանային ենթակայության ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների ղեկավարներին նշանակում էին համապատասխան բնագավառների շրջանային, քաղաքային միավորումների/վարչությունների/ղեկավարները, սակայն այդ որոշումները նրանք պետք է համաձայնացնեին պատգամավորների շրջանային, քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեների հետ: Պատգամավորների գյուղական, ավանային խորհրդի գործադիր կոմիտեն նշանակելու էր բնակարանային-կոմունալ տնտեսության, բնակչության կենցաղային սպասարկման ձեռնարկությունների, դպրոցների, նախադպրոցական և արտադպրոցական մշակույթի և առողջապահության հիմնարկությունների ղեկավարներին, բայց դարձյալ համաձայնեցնելով նշված բնագավառի վերադաս մարմինների հետ: Կադրերի նշանակման և աշխատանքից ազատման հարցում տեղական խորհուրդները լիովին ազատ չէին, թեև ազդեցության որոշ լծակներ պահպանեցին: Փաստորեն, եթե նախկինում կադրերի նշանակումը տեղական խորհուրդները համաձայնեցնում էին Կոմունիստական կուսակցության հետ, այժմ այդ դերը ստանձնում էին տարբեր ոլորտների հանրապետական գործադիր իշխանության մարմինները: Դա նշանակումէր, որ տեղական խորհուրդները դեռևս կազմում էին պետական իշխանության մաս և ինքնակառավարման մարմիններ չէին:

Տեղական խորհուրդների գործադիր կոմիտեները լուծում էին մի շարք հարցեր կրթության, առողջապահության, բնակչության սոցիալական պաշտպանության, գյուղատնտեսության ոլորտներում: Շատ յուրահատուկ պայմաններում էին հայտնվել սահմանմերձ շրջանների, փախստականներով բնակեցված, աղետի գոտու տեղական խորհուրդները: Խորհուրդների գործադիր կոմիտեների գործառույթները ավելացան հատկապես հողի սեփականաշնորհման հետ կապված: Այդ էր

պատճառը, որ ՀՀ նախարարների խորհուրդը 21.02.1991 N132 «Ժողովրդական պատգամավորների շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների ապարատների և դրանց բաժինների (վարչությունների) աշխատողների թվաքանակի ավելացման մասին» որոշմամբ սահմանեց, որ «ի կատարումն Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի 1990 թվականի նոյեմբերի 18-ի «ՀՀ գյուղատնտեսության նախարարության կենտրոնական ապարատի կառուցվածքի մասին» N 524 որոշման 6-րդ կետի, գյուղատնտեսության վարչություններ ստեղծելու նպատակով ավելացնել ժողովրդական պատգամավորների շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների ապարատների և նրանց բաժինների (վարչությունների) աշխատողների թվաքանակը 620 միավորով, տարեկան 2840.5 հազար ռուբլի աշխատանքի վարձատրության ֆոնդով…» [**6**]:

Դեպի ինքնակառավարում արված քայլ էր ՀՀ Գերագույն Խորհրդի «Հայաստանի Հանրապետության 1991 թվականի պետական բյուջեի մասին» որոշումը [7] /15.05.1991/, որով սահմանվեց, որ ժողովրդական պատգամավորների շրջանային, քաղաքային և քաղաքի շրջանային, ավանային և գյուղական խորհուրդները ինքանուրույն են կազմում, հաստատում և կատարում համապատասխան վարչական տարածքների բյուջեները: Տեղական բյուջեները պետք է ձևավորվեին ի հաշիվ սեփական եկամուտների և ձեռնարկությունների, միավորումների ու կազմակերպությունների շահութահարկից կատարվող մասնահանումների (մասնահանումների չափերը որոշում էր ՀՀ նախարարների խորհուրդը): Որոշվեց, որ «հանրապետական ենթակայության քաղաքների շրջանների, շրջանային ենթակայության քաղաքների, ավանային և գյուղական բյուջեների համար շահութահարկի, բանվոր-ծառայողներից պահվող եկամուտների և մյուս հարկային ու ոչ հարկային եկամուտներից կատարվող մասնահանումների նորմատիվները հաստատում են վերադաս ժողովրդական պատգամավորների խորհուրդները» [**7**]:

1991 թ. հունիսի 18-ի ՀՀ նախարարների խորհրդի «Պատգամավորների շրջանային և հանրապետական ենթակայության քաղաքային խորհուրդների գործկոմների նախագահների պաշտոնային դրույքների մասին» N 402 որոշմամբ ընդունվեց ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկությունը և մի շարք շրջանային և հանրապետական ենթակայության պատգամավորների քաղաքային ու շրջանային խորհուրդների գործկոմների նախագահների պաշտոնային դրույքները սահմանվեցին ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդի 1985 թ. հոկտեմբերի 7-ի N511 որոշման համապատասխան սխեմաներով նախատեսված պաշտոնային դրույքների առավելագույն չափերով [**8**]: 1991թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ նախարարների խորհրդի որոշմամբ հաստատվեց տեղական խորհուրդների գործադիր կոմիտեների, դրանց վարչությունների և բաժինների աշխատողների առավելագույն թվաքանակը և աշխատավարձի ֆոնդը [**9**]:

Նոր իշխանությունները մի կողմից փորձում էին ուժեղացնել հսկողությունը տեղական խորհուրդների նկատմամբ, մյուս կողմից՝ բարձրացնել դրանց պատասխանատվությունը տեղական հարցերի լուծման համար: Հատկապես դա վերաբերվում էր բնակչության պաշտպանության հարցին:

Շրջափակման, վառելիաքաէներգետիկ ճգնաժամի հետևանքով ժողովրդական տնտեսության մեջ արտակարգ իրավիճակ էր առաջացել: Այդ իրավիճակը կարգավորելու համար ՀՀ նախարարների խորհուրդը որոշեց ստեղծել կենտրոնական, տարածքային և տեղական հանձնաժողովներ, որոնց նախագահները պետք է ի պաշտոնե լինեին նախարարությունների, գերատեսչությունների, պատգամավորների շրջանային և քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեների, հիմնարկ-ձեռնարկությունների, կազմակերպությունների ղեկավարները: Խնդիրը կարգավորելու համար ՀՀ կառավարության 1991թ. նոյեմբերի 29-ին ընդունեց «Տնտեսական շրջափակման պայմաններում բնակչության և ժողովրդական տնտեսության կենսագործունեությունը ապահովելու կազմակերպական միջոցառումների մասին» N 656 որոշումը [**10**]:

Գորիսի, Կրասնոսելսկի, Կապանի, Մեղրու, Սիսիանի, Վարդենիսի, Վայքի շրջխորհուրդների գործկոմների և ՀՀ գյուղատնտեսության նախարարության առաջարկով ՀՀ նախարարների խորհուրդը որոշում կայացրեց համաձայնեցված հիդրոօդերևութաբանա-

կան պրոցեսների վրա ակտիվ ներգործության ռազմականացված ծառայության հետ, նշված շրջաններում ստեղծել հակակարկտային ռազմականացված ջոկատներ [**11**]: ՀՀ գյուղնախարարությանը, նշված շրջանների խորհուրդների գործկոմներին հանձնարարվեց 1992 թ. ռազմականացված ջոկատների հրամանատարական կենտրոնների և հրթիռահրետանային մարտկոցների շինարարության համար հողամասեր հատկացնել, ապահովել անհրաժեշտ փաստաթղթերի կազմումը, 1992-1995 թթ. պլաններում նախատեսել և իրականացնել հակակարկտային ռազմականացված ջոկատների հրամանատարական կենտրոնների և հրթիռահրետանային մարտկոցների շինարարությունը [**11**]:

ՀՀ կառավարության 1992 թ. հուլիսի 13-ի N 272 կարգադրությամբ Ադրբեջանի հետ սահմանամերձ շրջանների և քաղաքների պաշտպանության կազմակերպման, մարտական գործողություններից տուժած տնտեսության վերականգնման համար դրանք ամրակցվեցին շրջանային և քաղաքային պատգամավորական խորհուրդների գործադիր կոմիտեներին, որոնք պետք է յուրաքանչյուր եռամյակ հաշվետվություն ներկայացնեին ՀՀ կառավարությանը [**12**]: 1992 թ. պատգամավորների շրջանային և քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեներին հանձնարարվեց կառավարություն ներկայացնել առաջարկություններ սահմանամերձ բնակավայրերի գործազուրկ և սոցիալապես անպաշտպան բնակիչների սոցիալական պայմանների բարելավման միջոցառումների մասին [**13**]: Սակայն խորհուրդների մեծ մասը այս հարցում պասիվ դիրքորոշում բռնեց: Միշտ լինելով հսկողության տակ և հանդես գալով, որպես վերևից իջեցվող որոշումների կատարող դրանք չէին կարողանում հանդես բերել բավարար նախաձեռնողականություն, դրա հետ մեկտեղ նշենք նաև, որ շրջափակումների և վառելիքաէներգետիկ ճգնաժամի, փլուզվող տնտեսության պայմաններում ելքեր գտնելու հնարավորություններն առանձնապես մեծ չէին: ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության՝ Ադրբեջանի հետ սահմանամերձ շրջաններում ստեղծված իրավիճակի և դրա բարելավման միջոցառումների մասին» N 498 որոշման (1992 թ. հոկտեմբերի 1) մեջ նշվում էր, որ «Սահմանամերձ շրջանների և քաղաքների պատգամավորների որոշ շրջանային և քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեներ ծագող հիմնահարցերի լուծման համար փոխանակ մոբիլիզացնելու տեղի նյութական և հոգևոր հնարավորություններն՝ այդ հարցերով դիմում եմ հանրապետական մարմիններին» [**13**]:

Սահմանամերձ շրջաններում պաշտպանության կարիքների համար ՀՀ ՊՆ-ին և ՀՀ արտակարգ իրավիճակների պետական վարչությանը հանձնարարվեց ներգրավել պատգամավորների սահմանամերձ շրջանների և քաղաքների, դրանց ամրակցված շրջանային և քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեներին՝ քաղաքացիական բնակչությանն, աշխատավորական կոլեկտիվներին անհրաժեշտ աշխատանքներ կազմակերպելու համար [**14**]:

Խիստ լարված մթնոլորտում տեղական խորհուրդների գործադիր կոմիտեներին միշտ չէ, որ հաջողվում էր լուծել բազմազան խնդիրներն, իրականացնել պատշաճ կառավարում, կարգավորել սահմանամերձ շրջանների քաղաքացիական պաշտպանության հարցերը: 1991-1992 թթ. սահմնամերձ շրջաններում համակարգված չէին քաղաքացիական և զինվորական իշխանությունների փոխհարաբերությունն՝ ինչն երբեմն լարվածություն էր առաջացնում դրանց միջև:

Հանրապետության կենտրոնական իշխանությունների և պատգամավորների տեղական խորհուրդների միջև լարվածությունը պահպանվում էր նաև տեղերում հին նոմենկլատուրայի պահպանման պատճառով: Պատահական չէ, որ 1993 թ. իր ծրագրային ելույթում Լևոն Տեր-Պետրոսյանը դարձյալ նշում էր. «Քանի դեռ Հայաստանում գոյություն ունի խորհուրդների համակարգը, մենք չենք կարող ստեղծել այսօրվա պահանջներին համապատասխանող լուրջ պետական կառույցներ: Իսկ համակարգը, թեև գլխատած, դեռևս շարունակում է իր գոյությունը, նրա ներքին օղակներում տիրում են թե՛ այդ կառույցի բարքերը, թե՛ նաև՝ պաշտոնյաները» [**15**]:

Փաստորեն անկախության հռչակումից հետո Հայաստանում կենտրոնական իշխանությունը լուրջ փոխակերպում ապրեց, իշ-

խանության եկան նոր քաղաքական ուժեր, սակայն տեղերում պահպանվեց կառավարման խորհրդային համակարգը: Տեղական խորհուրդները մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով միշտ չէ, որ կարողանում էին լուծել նոր, մինչ այդ իրենց լիազորությունների շրջանակներում չեղած խնդիրները, ինչը հարուցում էր հանրապետական իշխանության դժգոհությունը: Տեղական կառավարման նոր համակարգի և ինքնակառավարման մարմինների ստեղծումն աստիճանաբար դառնում էր օրակարգային հարց, որը սակայն հնարավոր եղավ լուծել միայն պատերազմի ավարտից և ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո 1995թ.:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի ազգային արխիվ /այսուհետ՝ ՀԱԱ/,Ֆ-113, Ց-167, Գ-373, էջ 6:
2. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80
3. Լևոն Տեր–Պետրոսյան, Ընտրանի, 2006 թ., Ելույթ Հայոց համազգային շարժման 4-րդ համագումարում, 1992 թ. մարտի 22, էջ 285:
4. ՀԱԱ, Ֆ-207, Ց- 66, Գ- 10:
5. ՀԱԱ, Ֆ-113,Ց-80,Գ- 49:
6. ՀԱԱ, Ֆ-113, Ց-165, Գ-129, էջ 3:
7. ՀԱԱ, Ֆ- 113, Ց -180, Գ -49:
8. ՀՀ կառավարության որոշումների ժողովածու, N 6, հունիս, Ե -1991, էջ 567:
9. ՀԱԱ, Ֆ - 113, Ց - 165, Գ- 583, էջ 1:
10. ՀԱԱ, Ֆ-113, Ց-165, Գ-646:
11. ՀԱԱ, Ֆ -113, Ց-165, Գ- 195:
12. ՀՀ կառավարության որոշում N 498, 1992 թ. հոկտեմբերի 1// 113, 167, 485, 0010
13. ՀԱԱ,Ֆ -113, Ց-167,Գ- 485, էջ 22:
14. ՀԱԱ, Ֆ- 113, Ց- 167,Գ-485, էջ 32:
15. Լևոն Տեր-Պետրոսյան, Ընտրանի, 2006 թ., էջ 284:

Сдана/Հանձնվել է՝ 18.01.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 21.01.2020
Принята/Ընդունվել է՝ 26.01.2020